# ԱՆԻԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐ 1000 ՏԱՐԻ

ԿԱՐԵՆ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

## ԱՆԻԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԸ—ՀՈԳԵՎՈՐ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ

Անին մեր ազգային ճոխութեան և ճարտարապետութեան յետին և յայտնի թագաւորն է. Կաթուղիկէն ալ Անոյ դշխոյն է, հաւգարումեկ եկեղեցեաց թագուհին:

ՂԵՒՈՆԴ ԱԼԻՇԱՆ

989 թվականին՝ ՈՒՂԻՂ 1000 ՏԱՐԻ ԱՌԱՋ, սկսվեց Անիի Մայր տաճարի շինարարությունը, մի վառահեղ կաւույց, որն իր առանձին մանրամասներով, նորություն էր համաշխարհային ճարտարապետության մեջ:

Անին իրավամբ համարվում է հայ միջնադարյան քաղաքային ճարտարապետության պսակ, իսկ Մայր տաճարը՝ այդ պսակի ամենաշքեղ զարդը: Ստորև սակայն չենք անդրադառնա հոլուշեն տաճարի ճարտարապետական առանձնահատկություններին, որի շուրջ բավականաչափ գրականություն կա, այլ կաշխատենք առկա մատենագրական և վիմագիր վկայությունների միջոցով ներկայացնել Անիի կաթողիկեն, որպես հոգևոր և մշակութային կենտրոն:

Կաթողիկոս Անանիա Ա Մոկացին (946—968), ընդառաջելով Անին մայրաքաղաք հռչակած Աշոտ Ողորմածի (953—977) ցանկությանը, Հայոց կաթողիկոսարանը Այրարատից տեղափոխեց երկրի քաղաքական կենտրոն՝ Շիրակ, այն հաստատելով Արգինա ավանում: Սմբատ Բ Բագրատունին (977—990) ընդարձակեց և ամրացրեց մայրաքաղաքը, իսկ Խաչիկ Բ Արշարունին (973—992) նորոգեց Արգինայի կաթողիկոսարանը, կառուցեց եկեղեցի: X դարի վերջերին հասունացավ պահը, երբ երկիրը պետք է քաղաքական և հոգևոր մեկ կենտրոն ունենար: Այս պայմաններում է, որ Սմբատը. «արկանէ հիմն և մեծաշէն եկեղեցւոյն ի նմին քաղաքին Անւոյ ի ձեռն ճարտարապետին Տրդատայ...»[1]: Տաճարի շինարարությունը 1001 թ. ավարտին է հասցնում Գագիկ Ա Բագրատունու (990—1020) կինը՝ Կատրամիդե թագուհին: Այսպիսով Մայր տաճարը կառուցվեց որպես երկրի գլխավոր եկեղեցի: Խաչիկ Արշարունուց հետո կաթողիկոս ձեռնադրված Սարգիս Սևանեցու (992—1019) «առաջին գործն եղաւ

[1] Ստեփանոս Տարոնեցի Ասողիկ, Պատմութիւն տիեզերական, ՍՊբ, 1885, էջ 185:



Անիի Մայր տաճարը

աթոռանիստ տեղւոյն փոխադրութիւնը»[2]. Անին դարձավ կաթողիկոսական աթոռանիստ, իսկ Մայր տաճարը՝ կաթողիկոսարանի եկեղեցի:

Սարգիս Սևանեցին հայտնի է իր եռանդուն գործունեությամբ: Եղել է մշակութային ձեռնարկումների հովանավոր, եկեղեցաշինարար: Կառուցել է «վկայարան սրբոց Հռիփսիմեանց առընթեր կաթողիկէին Անւոյ»[3]: Ցավոք որոշակի փաստեր հայտնի չեն Մայր տաճարի հարևանությամբ եղած բուն կաթողիկոսարանի շենքի մասին: Անիի անավարտ մնացած պեղումներն այս հարցում անհրաժեշտ նյութեր չեն ընձեռում: Ն. Սարգսյանի վկայությամբ. «քարակոյտք աւերակաց բազում են շուրջ եկեղեցւոյն, որք թերևս բնակարանք էին եկեղեցականաց, հանդերձ հայրապետանոցաւ»[4]: Նույնը հաստատում է նաև Թ. Թորամանյանը՝ գրելով. «կաթուղիկեին շուրջը... բացի արևելյան կողմեն, ուր մեկեն ավելի մատուռներ կան... հարավային կողմի վրա կերևին դարձյալ ուրիշ հին շինությանց մնացորդներ ալ»[5]:

Դեռևս Արգինայում եղած ժամանակ Հայոց կաթողիկոսարանին կից գործում էր վարդապետարան՝ բարձր տիպի դպրոց, կար նաև մատենադարան: Կաթողիկոսարանի տեղափոխությամբ վարդապետարանը և մատենադարանը նույնպես հաստատվեցին Անիում՝ Մայր տաճարին կից: Սարգիս Սևանեցու պատվերով իր «Տիեզերական պատմությունն» ստեղծելիս կաթողիկոսարանի մատենադարանից է օգտվել պատմիչ Ստեփանոս Տարոնեցի Ասողիկը, որն սկզբնաղբյուրների թվում օգ-

---

[2] Մաղաքիա Օրմանյան, Ազգապատում, Կ. Պոլիս, 1912, էջ 1163:

[3] Մեծին Վարդանայ Բարձրբերդեցւոյ Պատմութիւն տիեզերական, Մոսկվա, 1861, էջ 128:

[4] Ն. Սարգսյան, Տեղագրութիւնք ի Փոքր և ի Մեծ Հայս, Վենետիկ, 1864, էջ 117:

[5] Թ. Թորամանյան, Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, աշխատությունների ժողովածու, Երևան, 1942, էջ 158:



Սասունի Անեցու «Հաւաքմունք ի գրոց պատմագրաց» երկի սկզբնաթերթը (Մատենադարան, № 3613), գրիչ՝ Մխիթար Անեցի

տագործել է զանազան ձեռագրեր, դիվանական փաստաթղթեր: Նա ամբողջությամբ մեջ է բերում Խաչիկ Արշարունու երկարաշունչ նամակը ուղղված Սեբաստիայի մետրոպոլիտին, տեղեկություններ է հաղորդում Անանիա Շիրակացու «հրաշագան Քննիկոնի» մասին, որը նույնպես կաթողիկոսարանում էր գտնվում[6]:

Անիի վարդապետարանի վերաբերյալ ակնարկներ կան Գրիգոր Մագիստրոսի՝ Պետրոս Գետադարձին հասցեագրված նամակներում: Վերջինս, լինելով զարգացած անձնավորություն, անհրաժեշտ ուշադրություն էր դարձնում ուսումնական հարցերին:

Հայոց կաթողիկոսարանը եղել է նաև գրչության կենտրոն: Պետրոս Գետադարձի ժամանակ այստեղ աշխատել է Թադեոս անունով մեկը. «որ էր անպարտելի գրչութեամբ»[7]: Կաթողիկոսարանի գրչատանն ընդօրինակվել է Անանիա Շիրակացու Քննիկոնը, որը կաթողիկոսից խնդրել էր Գրիգոր Մագիստրոսը՝ Սանահինի դպրոցի ուսումնական ծրագրում կիրառելու համար[8]: 1046 թ. Պետրոս Գետադարձի պատվերով նույն գրչատանը ձեռագիր է ընդօրինակել գրիչ և կազմարար Գեորգը (Մատենադարան, ձեռ. № 988)[9]:

1045 թ. Անին զավթած բյուզանդացիները գիտակցելով, որ «Հայոց պետականության անկումից հետո հայերին համախմբող միակ ուժը մնացել է Հայոց կաթողիկոսությունը»[10] մեկ տարի անց, այն ևս,

[6] Ա. Մաթևոսյան, Ստեփանոս Տարոնացի Ասողիկը և Անանիա Շիրակացու «Քննիկոնը», Պատմա-բանասիրական հանդես, 1986, № 3, էջ 125—133,

[7] Մատթեոս Ուռհայեցի, Ժամանակագրութիւն, Երուսաղեմ, 1869, էջ 123:

[8] Գրիգոր Մագիստրոսի թղթերը, Ալեքսանդրապոլ, 1910, էջ 3—9:

[9] Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, հ. Ա, Երևան, 1965, էջ 452:

[10] Հայ ժողովրդի պատմություն, հ. III, Երևան, 1976, էջ 436:

իր աթոռակալի՝ Պետրոս Գետադարձի հետ միասին, հեռացրին քաղաքից[11]:

Բյուզանդական կատեսպանների կարճատև տիրապետության շրջանում Անիի գլխավոր հոգևոր կենտրոն Մայր տաճարը միաժամանակ նաև կայսերական հրովարտակների ընթերցման ու արձանագրման վայր էր հանդիսանում: Այդ են վկայում կաթողիկեի պատերին եղած երկու արձանագրությունները, գրված կատեսպաններ Ահարոն Բուլղարի և Բագրատ Վխկացու կողմից[12]:

1064 թվականից հետո, սելջուկյան դաժան հարվածին հաջորդած ժամանակահատվածում քաղաքի մշակութային կյանքն զգալիորեն խամրեց: Սակայն արդեն 1080-ական թվականներին Բարսեղ Անեցու եռանդագին գործունեության շնորհիվ Անիում ազգային, հոգևոր և մշակութային նոր զարթոնք սկսվեց: «...ի յամի ՇԼ (1081)... ի վանքն, որ կոչի Հաղբաթ ձեռնադրեցին զտէր Բարսեղ կաթողիկոս յաթոռ սրբոյն Գրիգորի՝ ի վերայն աշխարհին Հայոց... յայսմ ժամանակիս նորոգեալ եղեւ աթոռ սրբոյն Գրիգորի ի քաղաքն Անի... Եւ ելեալ գայր Բարսեղ կաթողիկոսն Հայոց ի թագաւորաբնակ քաղաքն Անի և ելեալ ամենայն տունն Շիրակայ գնալ ընդ առաջ նորա... և նստուցին զտէր Բարսեղ յաթոռ տեառն Պետրոսի»[13]: Այս շրջանում, ստանձնելով Անիի վարդապետարանի ուսուցչապետությունը, գիտամանկավարժական լայն գործունեություն է ծավալել Հովհաննես Սարկավագը[14]: Վերջինիս աշխատանքը, ինչպես երևում է մի հիշատակարանից, սերտորեն առնչվել է Մայր տաճարի հետ. «Սարկաւագ քահանայ՝ սպասաւոր Սուրբ Կաթողիկէի մեծի, որ յԱնի, ի բազմաց աւրինակաց ի ձեռն և այլոց գիտնականաց զաւագտակարսն առեալ հաւաքեաց ի մի դիր և շարադրեաց իւրով ձեռամբ...»: Խոսքը վերաբերում է «Կոչումն ընծայութեան Կիւրղի Երուսաղեմացւոյ» ձեռագրի Անիում գրված օրինակին, որից կատարված ընդօրինակության 1195 թ. հիշատակարանից է առնված հիշյալ քաղվածքը: Գիտնական-ուսուցիչ Սարկավագը կարճ ժամանակամիջոցում մեծ հոչակ է բերում Անիի վարդապետարանին, որովհետև. «ամենայն նեամացեալ և խամրացեալ գիտութիւնք, որ ի տգիտութենէ և ի ծուլացելոց և խաւսուրելոց մտաւք ծածկեալ աղաւաղեցան... նորին աշխատութեամբ և արագութեամբ մտաց զարդարեցան, և ցնծացան անձինք տեսաւէր և լսաւէր արանց»[16]: Սարկավագի վարքում բազմաթիվ կարևոր տեղեկություններ են պահպանվել Անիի բարձր տիպի դպրոցի վերաբերյալ: Այստեղ թվարկվում են ուսուցվող կրոնական և աշխարհիկ առարկաները, սաներին մատուցվող նյութերի հերթականությունը և այլ ուշագրավ մանրամասներ[17]:

XII դարու[18] հայ մատենագրության նշանավոր ներկայացուցիչ Սամուել Անեցին բազմաթիվ աղբյուրների վկայությամբ եղել է «քահանայ կաթուղիկէին Անւոյ»[19]: Աշակերտել է Գևորգ վարդապետին, Հովհաննես Սարկավագին: Կաթողիկոս Գրիգոր Գ Պահլավունու (1113—1166) պատ-

[11] Մայրաքաղաքի կրկնակի կորուստը դիպուկ է բնորոշում Վարդան Արևելցին գրելով՝. «Յոյնք... վերացուցին ի նմանէ (Անիից. Կ. Մ.) զերկուսին պսակն՝ զգահ հայրապետութեան և զթագաւորութեան, յակամայս ածեալ զերկուսեանս առ ինքեանս՝ և անդրէն ոչ դարձուցին»: Վարդան Բարձրբերդեցի, Պատմութիւն..., էջ 133:

[12] Դիվան հայ վիմագրության, պր. I, Երևան, 1966, էջ 36—37:

[13] Մատթեոս Ուռհայեցի, Ժամանակագրութիւն..., էջ 265—267:

[14] Դրականության մեջ Սարկավագի Անիի դպրոցի գործունեության ժամանակ է համարվել XII դարի սկիզբը (Հայ ժողովրդի պատմություն, հ. III, էջ 312, Ա. Մովսիսյան, Ուրվագծեր հայ դպրոցի և մանկավարժության պատմության, Երևան, 1958, էջ 214), կամ XI դարի 70-ական թվականները (Կ. Միրումյան, Հովհաննես Սարկավագի աշխարհայացքը, Երևան, 1984, էջ 29): Մեր կարծիքով, Սարկավագի գործունեության սկիզբն Անիում պետք է կապվի կաթողիկոսարանի քաղաքում վերահաստատվելու իրադարձության հետ՝ 1081 թ.:

[15] Գ. Հովսեփյան, Ցիշատակարանք ձեռագրաց, հ. Ա, Անթիլիաս, 1951, էջ 595:

[16] Ա. Աբրահամյան, Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը, Երևան, 1956, էջ 120:

[17] Ա. Աբրահամյան, նույն տեղում, էջ 120—123:

[18] Բարսեղ Անեցու մահից հետո (1118 թ.) Հայոց կաթողիկոսարանը մեկընդմիշտ հեռացավ Անիից: Այս նույն շրջանում Անիի ամիրա Մանուչեին հաջորդած Աբուլասվարը (1110 թ.) հպածանքներ սկսեց սունցիների նկատմամբ, որոնք դիմեցին վրաց Դավիթ թագավորի օգնությանը և վերջինս 1124 թ. գրավեց քաղաքը: Ողջ XII դարի ընթացքում շարունակվեց Անիի համար մղվող համառ պայքարը Շեդդադյան ամիրաների և վրաց թագավորների միջև, մինչև որ 1199 թ. Զաքարյանների գլխավորած հայ-վրացական զորքերի կողմից քաղաքն ազատագրվեց մահմեդականների տիրապետությունից:

[19] Հ. Անասյան, Հայկական մատենագիտություն, հ. Ա, Երևան, 1959, էջ XLIX—LIII:

վերով կազմել է ժամանակագրություն՝ «Հավաքմունք ի գրոց պատմագրաց...»[20], հեղինակ է նաև այլ բնույթի գործերի, այդ թվում տոմարի մեկնության[21]:

XII դարի վերջերին և XIII դարի դասկզբներին Մայր տաճարի փակակալն է եղել Մխիթար Անեցի պատմիչը: Հաոիճի վանքի Գրիգոր վարդապետի պատվերով գրված նրա պատմագրական երկից մեզ է հասել միայն սկզբի հատվածը[22]: Նախաբանում Մխիթարն արտահայտում է իր վերաբերմունքը պատմագիտության նկատմամբ, տեսական եզրահանգումներ անելով: Ըստ նրա, հասարակությունն ու անհատը պատմությամբ պետք է դաստիարակվեն[23]:

Մխիթար Անեցին զբաղվել է նաև թարգմանական աշխատանքով. «...թարգմանեաց Մխիթար պատուական քահանայն կաթողիկեցի զպատճառս խաւարման արեգական և լուսնի ի պարսկէ...»[24]: Պատմիչ Ստեփանոս Օրբելյանը մեծ ակնածանքով է հիշատակում Անեցուն, նշելով, որ Ստեփանոս Գ Սյունյաց եպիսկոպոսը գրել է Բասրաց (Սյունիքի) թագավորության կործանման պատմությունը «ի հոյակապ քաղաքն Անի ի խնդրոյ սուրբ քահանային Մխիթարայ՝ սաւագերիցու քաղաքին և փակակալի Սուրբ Կաթողիկէին»[25]: Այսպիսով Մխիթար Անեցին ոչ միայն պատմիչ և թարգմանիչ է, այլև պատմական երկի պատվիրատու:

Թե՛ Սամվել Անեցու, թե՛ Մխիթարի ինքնագիր մատյանները մեզ չեն հասել: Սակայն Մաշտոցյան Մատենադարանում պահվում է XII դարի վերջերին Հոռոմոսի վանքում գրված մի ձեռագիր (Մատենադարան, ձեռ. № 3613), որը պարունակում է Սամուելի երկը, իսկ գրիչն իրեն անվանում է Մխիթար Անեցի («զՄխիթարիչ Անեցի սուտանուն աբեղայ և աշակերտ բանի ի վանացն Հոռոմոսի»[26]: Գրիչ Մխիթար Անեցու և պատմիչ Մխիթար Անեցու նույնությունը հավանական է թվում, երբ նկատի ենք ունենում ժամանակի համապատասխանությունը (XII դ. վերջեր—XIII դ. սկզբներ): Մյուս կողմից՝ պատմագիտության նկատմամբ հետաքրքրություններ ունեցող մարդ է եղել Հոռոմոսում ուսանող ասնեցի գրիչը, որովհետև Սամուելի ժամանակագրությունն ընդօրինակել է հենց իր օգտագործման համար («Զմեղաւոր ստուգաւղս և զաշխատաւորս զՄխիթար... յիշել աղաչեմ»)[27]:

Այսպիսով ուրվագծվում է մի հաջորդական կապ. **Հովհաննես Սարկավագ**, նրան աշակերտած՝ **Սամուել Անեցի**, վերջինիս հաջորդած **Մխիթար Անեցի**, որոնք բոլորն էլ սպասավորել են **Անիի Մայր տաճարում** և իրենց եկեղեցական պարտականությունները հաջողությամբ զուգակցել են մշակութային, գիտական գործունեության հետ:

Զաքարյանների իշխանության շրջանում կաթողիկեն նորոգվեց, փարթամացավ բազում նվիրատվություններով, որոնց թվում քիչ չէին նաև ձեռագրերը: 1213 թ. արձանագրության մեջ քաղաքի նշանավոր մեծատուն Տիգրան Հոնենցը նշում է. «Շինեցի... զաշտիճաներս մեծափառ Սրբոյ Կաթողիկէիս... ետու երկու Տաւնական եւ սուրբ Գրիգոր մին...»[28]: Մեկ այլ վիմագիր վկայում է. «Ես Զուհալս Կարբցի... միաբանեցաւ Սուրբ Կաթողիկէիս եւ էտու Աւետարան, Էսայի...»[29]: 1236 թ. Նացուալ անունով մեկը Մայր տաճարին է նվիրել 1181 թ. Հոռոմոսում գրված մի Ավետարան[30]: Անին շարունակում էր մնալ Հյուսիսային Հայաստանի եկեղեցական կենտրոն: Ինչպես նշում է Մաղաքիա Օրմանյանը. «Անուշ արքեպիսկոպոսները լիազոր իշխանութեամբ գլխաւորութիւն կը պահէին

---

[20] Ուշագրավ է, որ թեև Գրիգոր Գ Պահլավունին Անիում չէր աթոռակալում, սակայն հենց Սամուելի վկայությամբ մշտապես հետևում էր Անիի կացությանը, «վասն իւր սեփական աթոռոյս» (Սամուել Անեցի, Հավաքմունք ի գրոց պատմագրաց, Վաղարշապատ, 1893, էջ 127).

[21] Ա. Աբրահամյան, Սամվել Անեցու տոմարական և տիեզերագիտական աշխատությունները, «Էջմիածին», 1952, № 1, էջ 30—36:

[22] Մխիթար Անեցի, Մատեան աշխարհավէպ հանդիսարանաց, աշխատասիրությամբ Հ. Մարգարյանի, Երևան, 1933:

[23] Տե՛ս Լ. Բաբայան, Դրվագներ Հայաստանի զարգացած ֆեոդալիզմի դարաշրջանի պատմագրության, Երևան, 1931, էջ 192:

[24] Վարդան Բարձրբերդեցի, Պատմութիւն, էջ 137—138:

[25] Ստեփանոս Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, Թիֆլիս, 1910, էջ 332:

[26] Մատենադարան, ձեռ. № 3613, էջ 26բ:

[27] Նույն տեղում, էջ 35բ:

[28] Դիվան հայ վիմագրության, պր. I, էջ 34:

[29] Նույն տեղում, էջ 35:

[30] «Ես... Նացուալս՝ տվի զսուրբ Աւետարանս ի Սուրբ Կաթողիկէն... ի ձեռն աստուածայպատիւ քահանայիցն՝ Դասապետին, Գերսամին, Սարգսի սերկեւագին» (ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, կազմեց Ա. Մաթևոսյան, Երևան, 1984, էջ 197):

բոլոր Հայաստանի մէջ, եպիսկոպոս յարեւելս հիւսիսոյ կոչմամբ և միայն մեծագոյն իրոլոլութեանց մէջ յարաբերութիւն ունէին Հռոմկլայի աթոռին հետ...»[31]:

Անիի քաղաքական, տնտեսական, հոգեւոր և մշակութային ծաղկումը շուտով, սակայն, ընդհատվեց մոնղոլական աշխարհավեր արշավանքի հետևանքով (1236 թ.): XIII դ. երկրորդ կեսից և XIV դարի ընթացքում անկասելիորեն դեպի անկում գնացող քաղաքի գլխավոր եկեղեցու վերաբերյալ սահմանափակ տեղեկություններ են հայտնի[32]:

Ըստ ավանդության 1319 թ. տեղի ունեցած երկրաշարժը եկավ հավելելու Անիի դժբախտությունները՝ կործանելով Մայր տաճարի գմբեթը[33]: Դրանից հետո քաղաքի գոյամարտը շարունակվեց ևս մեկ դար: Անիի մեզ հայտնի վերջին եպիսկոպոս Հովհաննես Ոսկեփորիկը XV դարի սկզբներին ստիպված էր ապրել հայրենի քաղաքից տարագիր[34]:

Վերը բերված նյութերը վկայում են, որ չնայած պատմաքաղաքական ելևէջներին, Անիի կաթողիկեն, իր գործունեության շուրջ երեքհարյուրամյա շրջանում, ինչպես հոգևոր-եկեղեցական, այնպես էլ մշակութային կարևորագույն կենտրոն էր:

---

[31] Մաղաքիա Օրմանյան, Ազգապատում, էջ 1525:

[32] Դիվան հայ վիմագրության, պր. I, էջ 36, 39—40:

[33] Տե՛ս Թ. Հակոբյան, Անիի պատմություն, հ. Բ, Երևան, 1932, էջ 325—332:

[34] Կ. Մաթևոսյան, Անիի եպիսկոպոս Հովհաննես Ոսկեփորիկ գրիչը, «Էջմիածին», 1985, Ը, էջ 38—44: